<sup>3</sup> Յօրինակն մեր և կշռաքնին :

<sup>4</sup> Յօրինակն մեր և հաւատաց :

ուածի Տեառն՝<sup>5</sup> առն եղեալ որդի, իբրև զանզբամ՝  
որպէս մեծ առաքեալն Պիօղոս • այլ քո Տեառն քրիստո-  
սանանութեամի տարեալ՝ ներելով անզգամիւթեան  
իմնամ, ընկալ զիս իբրև զանզբամ։ Օ կեալ զիմ՝ ի  
տղայութեանն՝ զայն Տէր իսկ ինքնին քաջ գիտէ։

Տարեալ զիս ըստ վարդապետաց իմոց հրամանի՝ ի  
շուռում, ժամանակեցի անդ • և եկեալ անտի կեցի առ  
կամնարականստ՝<sup>6</sup> յամենայն առիոխոն մինչեւ յամ նուաճ-  
ման ձերոյ : Եւ զշետ այնորիկ որպէս թէ ձանձրացեալ  
յաշխատութենէ շփոթիցն՝ կամեցայ պարապիլ ալօթից  
և հանգչել : Եւ երթեալ՝ ի Այմիս՝ կեցի անդ ամս  
երկուս, զձմեռն՝ ի քարայրի առ առն միում հոչակելոյ՝ ի  
բնակչաց գաւառոին յամենայն կրօնաւորութիւնս, որում  
անուն էր Ա'ովակս, և տեղին՝ Ա'նմուկ • և զամնոն յա-  
ղագս տօթոյ տեղոյն՝ քահանայապետ աշխարհին՝ տէր  
Ա'ուշէ<sup>7</sup>, տանէր զիս առ ինքն, ուր և լինէր՝ ի հովու։  
Ա'մդ՝ զառաջինն կելոյն իմոյ զվարս՝ տէր՝ Ա'մրսէ և  
Նրատ կամնարական՝<sup>8</sup> գիտեն զԱյմեացն յառաջագրեալ  
եպիսկոպոսն աշխարհին : Եւ դու յայց ելեալ ինդրել  
զիս, և գտեալ յաշխարհին յայնմ՝ ածեր՝ ի տուն ոչ  
իբրև զաղքատ զոք՝ ի կազմածէն և ՚ի մանկաւոյն, և ոչ  
իբրև օտար զոք՝ ի քէն և կամ զծառայ ուրուք • քանզի

<sup>5</sup> Ղազար յընքացս ողբցն թռվթէ եւրոյ Տէր կոչէ զՎահան։

<sup>6</sup> Կամնարականք ազգախառն էին Մամիկոնից, քանզի զքուսոր քա-  
զն Վարդանայ՝ ի հնութեան ունէր Արշակը՝ տէրն Արշարու-  
նեաց։ Տէս Ղազարայ Պատմ. եր. 193։

<sup>7</sup> Ա'ուշէ եկաց կաթողիկոս զինէ Սամաւէլը՝ ի 502 տի։

<sup>8</sup> Կերտէն և Հրահատ կամ Հըտա՛ որպէս գրէ կրծառելով Ղազար, որ-  
դիք էին Արշարայ կամնարականք։ Տէս Ղազարայ Պատմ. եր. 212։

պարեգօտաւողք աղատեալ են 'ի Կիրիստոս։ Իսկ որ զա-  
տոյցն զիս պարեգօտիւք 'ի ծառայութեան աշխարհիս և  
աղատութեան եղե մեզ առիթ՝ Տեր Աղան քո Տեառն  
քեռի էր։ Բայտ այդմ մասին 'ի Հայո քե'զ Տեառն առվ էի։

Դարձեալ՝ երանելի մայրն<sup>9</sup> քո յորժամ առ բդեշին<sup>10</sup>  
ած զձեզ, յորում դրան և զմեզ ուսուցանէին—ստկայն  
թէպէտե ըստ տիոց աւագագոյնք քան զձեզ էաք, այլ  
մնադակիցք էաք ձեզ և խաղակիցք՝ կրելով 'ի խաղու զար-  
կանելիս ձեր զինի ձեր—մնուցանէ մայրն ձեր օրհնեալ  
և Ենոյշ Աւամ<sup>11</sup> ըստ իւրեանց հոգեսիրութեանն և  
զմեզ ընդ ձեզ որպէս զձեզ։ Ի՞մ ըստ այսմ ամենայնի  
քե'զ Տեառն անկ եի։

Իսկ ըստ առաւելեալ շնորհիս, զոր ետ ինձ Կիրիս-  
տոս, եթէ արժանաւորի կամ անսարժանի, զայն Տուիչն  
քաջ գիտաց։ Լապա արդարե քե'զ իսկ և արժանի։

<sup>9</sup> Զօրէ Վրհանայ զայս բնէ առէ Ղազար 'ի Պատմ. իւրում. «Կին  
նահասակին Հմուեկայ Մամիկոնէի՝ եղբօր որրոյն Վարդանայ . . . .  
եղե կին անտառնի և առաւելեալ ամենայն լաւ և մոտաւը մասամբք  
յամենայն կանայ» 'ի Հայաստան աշխարհի . որ մեյց և իրատեաց  
զորդին իւր յաշխարհին Վրաց 'ի տան Աշուշայի՝ Վրաց բդեշ-  
ին։ Եր. 191.

<sup>10</sup> Աշանօր զբուշին Վրաց՝ զԱշուշայէ, են խօսք, զորմէ ոյսպէս  
հառէ Ղազար յիւրում Պատմութեան. «Զորդին Հմուեկայ և ինչը  
նորա Զուկայ» — բդեշին Վրաց՝ Աշուշայ՝ ինդրեաց պարզես 'ի  
յարքայէն Պարսից Յաղկերտ . . . . և ածեալ են ցմայր իւրեանց,  
որում անուն էր Զուկէ։ »

<sup>11</sup> «Զքոյըն Զուկայ ունէր 'ի հնութեան բդեշին Վրաց Աշուշայ,  
որում անուն էր Անուշ Վրամ : » Պատմ. Ղազարայ . Եր. 192 :  
«Բդեշին Վրաց՝ Աշուշայ, էր այր նելացի և խորհրդական, և ու-  
նէր կին յաղգէն Արծրունեաց զքենի մեծի սեպհին Մամիկոնէից  
Վարդանայ . » ԿՍՍ. Եր. 88 :

Ա ամսզի՝ ի դարու յայսմ զբո զքաջութեանդ զօրացուցեալ պայծառացոյց վերին ինառնակալութիւնն քան զամենեցունց, որք էին և կամ որ այժմ են՝ ի հայս ։ և զիմ շնորհս քան զբազումն պարեգուտուրաց: Ի՞հա անըզ գամեցայ և ճառեմ ։ ներեամ՝ աղաչեմ, փոքր մի անըզ գամեւթեանս իմոյ: Ի՞պա ստոյդ՝ առաւել քեզ իսկ էի պրժանի:

Եւ եմ ես այն Ի ազար՝ ըստ առ՝ ի քեն և այլոց բազմաց առացածի, որում ոչ ոք գոյ փոխանակ: Խակ այժմ առ նախանձու աղետի բազումք նկրաեին լինել իմ փոխանակ ։ բայց եթէ իցեն:

Քանզի՝ ի սկզբանէ արարածոց բազում օձիրա գործեաց նախանձ յաշխարհի: Ի՞նդէն և անդ՝ ի սկզբանն զնախառտեղն ընկնեալ զնա նախանձու բանսարկուին՝ դարձոյց զնա՝ ի հող, և վկայէ գիր՝ ի լաթուղիկէսն, թէ նախանձու բանսարկումն եմուս մահ յաշխարհ: Եցրկուցն միայնոյ դեռես յլ՝ դամայ ծնելոց յաշխարհ՝ լայենի և հաբելի, որպէս՝ ի փոքրիկ և՝ ի նեղ՝ յանբաւ բնակութիւն տիեզերաց հայեցուցեալ զլայէն նախանձարկուդիւն դիւկն եղբայրասպանութեամք զաւակաց: Ի՞ ձեռն նախանձու գրգռեալ լասաւ՝ ի վերայ քակովբայ մահ խորհէր: Ի՞ ձեռն նախանձու զանմեղն քովսէփ մոլեգնութեամք եղբարբն՝ ի ստրկութիւն վաճառեցին: Եւ՝ ի ձեռն նախանձու զերկուս հոգեշնորհ անձինա՝ զլ՝ հարօն և զլ՝ արիամ, յանարժան խորհուրդ՝ յանդամեցուցեալ՝ բորոտեցուցանէր զմնրգարէ կինն: Ի՞ ձեռն նախանձու զախոյեանարեկ և զժողովրդակեցոյց զայրն՝ զլաւիթ անհանգիստ որսայր լաւուղ՝ ի կորուսանել:

Եւ արդ՝ զինչ ևս ասեմ՝ զարարածոց առ միմիանա որ և զամենեցուն զարարին և զոէր Հիսուս Քրիստոս առ նախանձու ժողովուրդ Հրեհին և քահանայապետք նախ ժամնակօք ճաղթալ պյառնէին՝ կոչելով զնա եր բեմն կախարդ, յասելն, թէ Իւղղերուղաւ իշխանաւն դիւաց հանէ գա զդես: Եւ դարձեալ՝ գինէմնլ անուանէին և զեխասէր, ասելով ցաշակերտոն, թէ ընդէ՞ր վար զապետն ձեր խառն ընդ մեղաւորս ուտէ և ըմպէ: Ի՞ւղիւ չպահեցողութեամբ և անժամակերութեամբ եպերէին. ասեն, ընդէ՞ր աշակերտոն Քովհաննու և Փարիսեցիքն պահէին և քո աշակերտքդ խպոն ուտեն: Աղչեցին զնա և դիւահար. ոչ՝ ասեն, ստոյգ առեմք, թէ Այսմարացի ես դու և դե գոյ 'ի քեզ: Եւ ժողովեալ սուտ վկայօ՝ առ միլեզնութեան քինուն զինչպէտս տային խօսել, և քըր քուեին խրախացեալք առաջի դատողացն, ուր ճանուցեալ. Վիղատոսի ըստ վկայութեան Իւետարանչին, թէ առ նախանձու միտոնեցին զնա, լուսցեալ զձեռս՝ ասէ, անպարտ եմ ես յարենէ առնդ, զի ոչինչ գտի 'ի դմա վկաս արժանի մահու. դուք առեք և ըստ ձերոց օրինաց դատեցարուք: Եւ ընկեցեալ զնա յօրէնան և 'ի ժողովուրդս, որք էին երկոքեանն մահապարտք՝ և' ժողովուրդք Հրեհին և' օրէնքն: Որոց չհանդուրժեալ դիւամնլ նախանձում՝ վիճակեցին մահու, և ոչ ուղղոց այլ անիծից, իբրև զշարագործ և մարդառուան, այսինքն՝ խաչի, զարարին և զնորոգին, զկենսատուն և զմահասպան, զերախտաւորն առ ամենեսեան, զքաղցրն և զբազմողորն:

Եւ զայս ամենայն կարիս կրեալ յանձն իւր յաղագս մեր՝ զսոյն և իւրոց աշակերտացն սոտէպ զգուշացուցանէր,

թէ և' ձեզ դիպելոց է այս ամենախ , .յորում մի՛ իբրև զանկազմն և զանպատրաստ գաեալք հասելոց 'ի վերայ ձեր վշտացն՝ զանգիտիցեք : Եթէ զիս սիրեցին, ապա և զմեղ սիրեսցեն . եթէ զիս ընկալան, և զմեղ ընդունին . ապա թէ զիս հալածեցին, և զմեղ հալածեն . եթէ զիս առեցին, և զմեղ առեն . և եթէ զիս, որ տանուտեր էի՝ Իւեղղերուղ կարդացին , որչափ ևս առաել զմեղ և զընտանիս իմ :

Պարին նմանեօք ըստ ժամանակի որսացեալ առ նախանձու կուտէին 'ի վերայ իմ բազում բանսարկութիւնա՝ ասելով, «Եթէ Ղազար ասէ, թէ պունկութիւն մեղք չեն . զսոյն և մարզպանին սա գրէ : » Եւ եթէ ընդէ՞ր այդ այդպէս, դու Տէր՝ քաջ գիտես քան զսուտ կարծողն : Եւ ընդունեին զեղիս և անսուրբ անձինք քաղցրախորժելով զուր այդպիսի բանից 'ի սատարութիւն բունելոյ յինքեանս չար գործոցն :

Եմ՝ ո՞ր ոք յանօրինաց՝ թող թէ 'ի քրիստոնէից, 'ի միտս իւր խորհել զայսպիսի ինչ բան , թող թէ և առ այլում զայսպիսի շնչել բան . ո՞ր անմիտ, ո՞ր տգէտ, ո՞ր հրէայ, ո՞ր այլաղանդ : Եւ Ղազար զայդ քարողէր . ո՞ւմ և կամ ուր և կամ ե՞րբ . որ տգէտն է գրոց, որ անհրահանգն է յուսմունա , որ Ա՛վասիական օրինացն օտար է և քրիստոսատուր շնորհին անտեղեակ : Եւ չիցե՞ն արդեօք աբեղեանս հայոց արժանի ողբոց արտասուաց և բազում սգոյ՝ համբաւել զանպիտանս, խասել առնախանձու զանարժանս :

Վանզի ո՞ւ արդեօք զերկայնամիտն և զանցասումն Ա՛ս տուած դրդեալ՝ յայնպիսի ահաւոր շարժեաց 'ի քարկու-

թիւն — ածել զջրհեղեղն 'ի վերայ ամենայն երեսաց երկրի , մինչև զամենայն ծածկել զլերին . ո՞չ ապաքէն բորբոքեալն 'ի պոռնկութիւն : Տեսեալ՝ ասէ, որդուոցն Աստուծոյ զղստերս մարդկան՝ խառնակեցան ընդ նոսա :

Քաղագս որո՞յ իրէք համարեցաւ այսպէս մեծ արդարութիւն ԱՀարօնեան Փենեհեզի ազգէ յազգ մինչև յաւիտեան, եթէ ոչ յաղագս հարկանելոյ գեղարդեամբն և ցցելոյ ընդ գետինն զ Օ ամերի հանդերձ ԱՌադիանացի բողիւն և ցածուցանելոյ զբարկութիւն ԱՄատուծոյ : Քորո՞ւմ պատուհասի քսան և չորք հազարք արանց 'ի միում պատերազմի անկան 'ի ժողովրդենէն Տեառն : — Ամոն ո՞չ ապաքէն վասն անհանձար խօսիցն բազմաժամանակեայ քինակալութեամբ սպանաւ յեղօրէն : — Լամիցին զսոցուն անդստին 'ի ԱՌովսիագիր պատմութենէն և յայլոց մարգարէից լսել զհակառակն . հայեսցին ընդ առաջին ճանապարհ հարցն ապաշխարութեան : — Այլն ԱՄԱՏՈՒԾՈՅ՝ ԱՆՈՎՔ , ընդ ամուսնացեալսն օրինաւորութեամբ և գտեալ հաձոյ ԱՄԱՏՈՒԾՈՅ՝ յանմահական փոխեցաւ վիճակն : — Այս՝ բազմաժամանակեայ պահելով զկուսութիւն մինչև 'ի հինգհարիւր ամ, և զկնի այսորիկ յաղագս որդեծնութեան ամուսնացեալ սրբութեամբ՝ երկրորդ աշխարհիս սերելոյ գտաւ պատճառս : — Աստ սմին և մեծն 'ի մարգարէնս ԱՌՈՎՍԻ սոյնպէս . սոյնպէս և պաշտօնեայ նորին պարկեշտասէր կուսութեամբ պատուեալ ՔԵՍՈՒ : Խակ զարմանալին զառնէն զլողիսայէ ո՞ք բաւական իցէ ասել բանիւ զգովութիւն , որ 'ի մարմի զամարմնոցն բերելով զքաղաքավարութիւն՝ հրեղէն կառօք 'ի հոգեղէնս վերացաւ 'ի կեանս : — Խակ եթէ 'ի քրիստոսատուր

շնորհեն զարցունց բաղձայցեն զնմննս, զիստագդյան գըտցեն և զզարհուրելիս, որ զբնաւ գործելոցն մեկուսի ընկեցեալ զմեղանչականութիւնս, և զլոկ զպատճառս տենչից հայեցմունքն ընդ կատարեալ շնութեանն ընեաց Փրկիչն՝ ասելով, թէ որ հայի ՚ի կին մարդ ՚ի պատճառս ցանկութեան՝ անդէն շնացաւ ընդ նմա ՚ի սրտի իւրում։

Այլ զհեթանոսաց և զվարդապետին յաւելեալ ՚ի սոյնս զքարոզութիւն՝ լուեալ. լուեսցեն լիրբքն և անամօթքն, որ այլոց բանիւ զիւրեանց կամաց խօսին զախորժս և չսոսկան արամեն, որով ՚Քրիստոս խօսեր ընդ աշխարհի, որ զմնացորդս չարչարանաց Փրկչին յիւրում ՚ի ճգնափորձալից ՚ի մարմնի կրեր՝ Տարսոնացի սերովկը բէն Պիոռոս : Այ զոր ինչ յաղագս պոռնկացելոցն չժառանգելոյ զարքայութիւնն գրեաց յամենայն յիւր ՚ի թուղթան՝ յոյժ բազում են, և գրել զբնաւն մի ըստ միոջէ շատ աշխատութիւն համարիմ և աւելորդս. քան զի ընդ գիտնոյ ( Շրինաց են խօսքն : Այլ սակաւ բանիւք զոր յերկրորդումն թղթին գրէ ՚ի կորնթացւոցն ճանաչի և այլն ամենայն, թէ ընդէ՞ր իսկ բնաւ և անուանի ՚ի միջի ձերում պոռնկութիւն : Եւ առ Եփեսացին, թէ պոռնկութիւն և ամենայն պղծութիւն և կամ ագահութիւն մի՛ անուանեսցի ՚ի միջի ձերում : Եւ անդէն առ ամին . թէ զայս գիտասջիք, զի ամենայն պոռնիկ, կամ պիղծ, կամ ագահ, որ է կուապարիշտ, ոչ ունի ժառանցութիւն յարքայութեանն ՚Քրիստոսի :

Այդ՝ աղէ, ասասցեն հեքը և թշուառականք, ընդէ՞ր առ նախանձ արկանիցին զամանինս ընդ անապաշխար մե-

դքք . զորոց և <sup>12</sup>.... յիշե ասելավ , թէ են մեղք , որ մահաւչափ են . զոր և յլ՝ եւտարանշացն կարդան ցանգ և զանց առնեն իբրև զարհամարոտա , թէ որ հայրապետէ շնորգին Առւրբ՝ մի՛ թողի նմա , մի՛ յայսմ աշխարհի և մի՛ ի համդերձելումն : Եալ գործէ ոք մեղս ըստ Թուլաւ թեան մարմայ , որպէս և եսս՝ որ մեղաւարս եմ քան զամնայն կենդանին : Եալ ասել զմեղսն չգոլ մեղս՝ մըպիսի արհամարհու և ամբարիշտ հոգի կարիցէ ածել զմաւ : Իսկ որ ճանաւէ զյանցանան և զարհուրեալ սրտիւ կարող լինիցի փութալ՝ ի զղջումն՝ վարդաղակի պատահի թողութեան : Իսկ որ կամիցի ապաքինիլ ըստ ձեռյ անմիա կուսանացն՝ չդիպի ողութանաթեան :

Եալ ասեն . «աղանդաւոր է : » Եւ զայս ստէպ ծանուցանել ամենեցունց ձեպէին . զորս հաւատացուցեալ՝ ի տկարամուաց՝ թերի վարդապէտութիւն շնորհին որ էր ՚ի յիս , հայեցուցանէին : Որ և զանուն անգամ աղանդոյն , որով բամբասէին յանդգնեալքն՝ կարի՛ յոյժ համարիմ աղտեղի նշանակել գրով : Եալ նկատումն հայրապետացն զնոցունց իսկ զյառաջագրելոցն բերէ զնմանս , թեթես և շնչինս համարել զպունկացելոցն զգործս :

Իսյց իմ ըստ կարի պարապեալ Յունական ուսմանցն և ըստ զօրելոյ տկարամութեանս իմոյ կարդացեալ զգիրս արանցն սրբոց , որք վառեալք Առւրբ հոգւոյն զինու՝ զոււրս հոգեփողոտս աղանդաւոր ուսմանցն դարձուցանէին անդրէն ՚ի սիրտս նոցունց և զաղեղունս նոցա փշրեցին ,

<sup>12</sup> Այսէն բառ բնէ պակասի . գուցէ անուան իցէ Յավիաննու , որոյ և յառալ բերեալ տեսանի բան :

և զիրկադործ վարդապետութիւնն իւրեանց գրով մեղ  
աւանդեցին՝ հօգացեալ իւրե զարդար և ոգեսէր հարս  
զամենայն տգետխորհուրդ՝<sup>15</sup> մարդոց զօգուտն։ Օսրոց  
յերկար ոք՝<sup>14</sup> և ջերմ սիրով ընթերցեալ զգրեալս՝ ան-  
վնաս և դիւրազերծ կարէ լինել հրարձակ նետից չար  
ձգողացն։ զարբոցն ասեմ զլ' թաճանակէ լ' ղեքսանդրացւոյ  
և զլիիւրդէ լ' ղեքսանդրացւոյ՝ ղերկուց միանուն արանցն,  
զլիիւրդէ լ' ըրուսաղեմացւոյ և զի՞արսղէ լիսարացւոյ և  
զԳարիգորէ լ' ազազացւոյ, —որ և յաղագս առաւելեալ՝ ի  
նմա շնորհի լ' ստուածաբան յորջորջեցաւ — և զմերոյն  
առաքելանմանն նահատակին Գարիգորի՝ զվարդապետէն  
Հայոց, և զնոցունց նմննեացն, ոյք զնոյն շաւիղ աւողջմն-  
տութեանն հետեւեալ վարդապետեցին։ Քաղագս որոյ և  
զայլն ամենայն և զորս առ նոսա արանցն ծառայք նորա  
ունին զամենայն գրեալսն զլ' միոսի լ' ղեքսանդրացւոյ և  
զլ', պողինարոսի զԳատիկեցւոյ, և զ' լիստորի զլ' նտիո-  
քացւոյ և զլ' տիկեայ լոստանդինուազութեցւոյ և զլում-  
բրիկայ ստրկի, որ և յետոյ Ա' անի զինքն անուանափո-  
խեաց, ուստի և Ա' անիքեցիք կոչեցան աշակերտեալքն  
նմա։ և զայլոցն բազմաց զնոյնանմանն կորսաեան Ճանա-  
պարհին ուղեկցաց, զորս սուրբ կաթուղիկէ և աւաքե-  
լանման լ' կեղեցւոյ նզովեալ և արտաքս ընկեցեալ յա-  
մենայնէ ՚ի բաց՝ և մեկուսացեալք՝ ՚ի յ' ստուծոյ ուղղա-  
փառ ուխտէն մինչև ցայսօր վարին ներկեալք իւրաքան-  
չիւր աղիտիւ անծածուկքն միմեանց՝ և յայտնի են ամե-  
նայն ուղղափառ ժողովրդոց։

<sup>15</sup> Յօրինակն մեր « զամենայն ապէա խորհուրդ մարդոց զօգուտն։ »

<sup>14</sup> Յօրինակն մեր՝ « յերկարուք, » զոր մեք « յերկար ոք » ընթեռնուաք։

Եւ արդ թէպէտե դթեալ սոքա անբժշկութեամբ կազմն 'ի հաւատն, այլ սակայն բանիւ և ոչ գործով . զի ըստ մարմնոյ պարկեշտութեան յամենայն ճգնութիւնա զմի միով ելեւը առնեն, և մանաւանդ 'ի կերածիւրս և ըմպելիս և 'ի գիջութեան ժուժկալութիւնս : Իսկ հայոց աշխարհի աղանդ, զոր ասեն՝ անանուն է ըստ վարդապետի և անգիր ըստ բանի : ՚Ի հաւատոյ և յուսմանէ տգէտք երեխն, և 'ի գործս ծոյլք և անժոյժք, յորոց՝ ըստ անգիտութեանն որ է 'ի նոսա և անկարգ ըստ վարուց, այդպիսի իսկ արդարե աղանդոց վայելէր բուսանել՝ ըստ յօդուածոյ առասպելարանութեանն, թէ « Իստ խոզի հարմացելոյ՝ կոյաջուր բաղանիք : » Ա՞ի արդարե պատմեցի այս գէթ՝<sup>18</sup> ըստ բանի ողբոյն և մի լուիցէ 'ի դրունա լուկաղովնի . իսկ որ ընթեւմուն 'ի միտ առցէ :

Իսայց ես թէե գիտէի զոք յայնպիսեացն՝ ընդ լրոյ դատել և կամ պարտաւորել ամննեիմք ոչ կամէի . վասն որոյ կարծէին չարաթոյնքն, թէ և ես նմանիցիմնոցա: ՚Ի անզի ուսեալ էի 'ի Փրկչէն, որ ոչ հրամայէ ամենեցունց՝ յոխորտ խել զորոնն 'ի ցորենոյն մինչև 'ի ժամնանակ հնձոցն, և առաքել զհրեշտակս իւր 'ի ժամնանակի հնձոցն . զորս կամ հրեշտակս իսկ ասէ և կամ ճշմարիտ վարդապետս . որպէս սովոր են զվարդապետս հրեշտակս անուանել աստուածեղէն Պաթքը, որպէս և զիշիւնս՝ աստուածս ասացին մարգարեկն: Իսկ ես ոչ հրեշտակս՝ և վարդապետ և ոչ երբէք իսկ չեմ եղեալ բանիս պյս ըստ երբէք 'ի հարցողաց ուրուք կամաց գործոյ իշխանութեան, և ոչ երբէք . քանզի յաղագք ատելոյ

<sup>18</sup> Յերկոսին յօրինակոն գրեալ տեսանի « 'ի գէթ . . .

զիս—թերեւ արդեօք և ըստ անարժանութեան—սուլը՝  
քըգ և անարասօք և յամենայն մեղաց ազատ ուսուցիչքդ  
հայոց՝ թող՝ ի մեծամեծան ձկանցուցանել զիս յեպիս-  
կոպասամթիւն և կամ՝ ի նոցին յառաջին զգաստութիւն  
և կամ յեկեղեցոյ դատաւորութիւն, այլ և քորեպիս-  
կոպոս ոք չարար, զոր Պարախկը և արք անարժանք գոր-  
ծեն և այսօր :

Խակ անձան՝ զանձն յանդկնեցուցանել՝ ի վարդապետութիւն՝ որպէս և զբազումն տեսանեի յանպիտանաց,  
այնպէս յահագին աւանէն սարսէի՝ ի ՀՅակովոսէ, որ  
բողոքն <sup>16</sup> ցանկ, թէ մի՛ բազում վարդապետոս լինիք՝ եղա-  
բարը, գիտածջիք զի մեծ դատաստան ընդունիք . և ոչ  
դարձեալ իբրև զլցեալն պիղծ և վատթար գործովք,  
որոց չհայեցեալ յիւրեանց գերանն, յայլոց մատուցեալ  
յակնն՝ զնսեն հանել շիւլ : Եւ այսպիսի կեղծեօք հնա-  
րեն կարծեցուցանել աշխարհի զանձինա արդարս . և այն  
ոչ երբէք ծածկի, այլ և՛ առաւելեալ յաւելուածովք  
կուտեն անձանց բարկութիւն յաւուրն բարկութեան և  
չլսեն զՊօղոսի բողոքն, թէ զանձինս դատէաք : Եւ պյլք  
ագահութեան ախտիւ վարակեալք՝ արկանեն ընդ պար-  
տեօք զարդարս և զշարդարս, և կարացեալ ևեթ ըմբըռ-  
նել զմամինայն՝ յաղագս որոյ խուենն, այսուհետեւ զա-  
մնեսեան արդարս անուանեն և անմեղս, և զմար-  
գարէին լումբակումայ ստունկանեն զաղաղակ՝ մանաւանդ  
թէ նովաւ :

Եւ կամաւ ևս խորհիցիս զյիշելոց զտուեալ պատգամն

<sup>16</sup> Յերկոսին յօրինական, «որ բողոքն ցանկ : »

Երանելը յիշովանու <sup>17</sup> Պահապահ կամուղիկասի եղ.  
բօրորդոյն, քեզ Տեառն՝ ի Աւելոյ <sup>18</sup> դրախտին՝ յարանց  
ամանց, որք խառանալով քեզ Տեառն կարասի՝ ինդրէին  
զաեղիս : Եւ քա Տեառն կաչեցեալ զաէր || արդ՝ զքա  
եղբայր, և զապայտիկ և զիմ անարժանութիւնա՝ հրա  
մայցեր միւանգամ երկրորդել տեռուն Յավհաննաւ  
զպասպամն : յոր առաջեալ քո Տեառն և այլ բազում  
ինչ բանս՝ գլուխ պատզամի պատասխանալյն արարեալ .  
« Եթէ պարտ եր նացմ իսկ ածել զմնու և զայդպիսի  
ինչ չյել առ իս . բայց որովհետեւ նպա անզգամեցան,  
տակայն ես զայրպիսի քրուսամք մեծ զվաստակ և բազում  
աշխատութեամբ զծախս՝ վատ վաճառականաւթեամբ ընդ  
թեթե ընչի տալ ոչ կարեմ, և ոչ զհագեոր և զյափւ  
տենական գանձ՝ անպիտոյ և անցաւոր կարասւոյ փոխա  
նակել : » Եւ ընդ տեառն Յավհաննայ զայրացար, « Ցէ  
բնաս իր բե քեզ առն բաել իսկ չեր <sup>19</sup> արժան զայդպիսի  
բանս, թաղ թէ առ իս բերել : »

Եւ ես վասնզի տկարամիտ և անզգուշացող այլ եմ  
յերկբաւոր միտս՝ ոչ զգացք ժամնյն դաւոյն . այլ պարտ

<sup>17</sup> Յովհան Մանդականի, որ կաթողիկոս եկաց զինի Գիւտայ 'ի  
480 տի :

<sup>18</sup> Արքաք անուն տեղայ է Սկաւես պյո, եթէ մորդոյ, բնձ կարծի,  
եթէ յատուկ անուն մարդոյ պիտի լինել, և գուցէ նշն իսկ իշխան  
ին Անձնացեաց, զոր 'ի Պատմութեան իւրում յիշտակի Ղաղար  
յերկուս գէպս՝ կոչելով զնո իշխան Անձնացեաց Սկաւկ (Պատմ .  
Ղաղարայ եր . 221—22) : Գուցէ 'ի գրտիտին Աւելոյ իշխանիս  
պյուրիկ եր, որ յանձնեաց Վահան Ղաղարաց զմերակացութիւն կա-  
թուղիկէ եկեղեցւոյ 'ի Նոր քաղաքի :

<sup>19</sup> Յերկուսին օրինակն մեր . ո թէ ընտւ իբրև քեզ առն լսել իսկ եր  
արժան զայդպիսի բանս, « և այլն :

Եր փութով և երագ երագ անկանել յոտադ արտառուցք  
և աղաչելով՝ և 'ի բաց փախչել 'ի հոգաբարձութենէ  
տեղւոյդ: Եւ ահա լինեի պրծեալ 'ի չարաթոյն ժանմեաց  
գաղանացն, որք յայնմէետէ դարանամոեալք 'ի ծածուկ՝  
և ըստ անհամար մեծութեան իւրեանց սաստիկ կարասաւ  
գնեալ բազում յեսան, սրեցին որպէս սուսեր զլեզուս  
իւրեանց և թոյնք իժից էին 'ի ներքոյ շրթանց: Եւ իմոյ  
ըմարթացեալ աղօթել իբրև զլաղմոսերգն, թէ պա-  
հեա՝ տէր, 'ի ձեռաց մեղաւորի և 'ի մարդոյ չարէ փրկեա  
զիս. որոց հետամոեալ այնուհետեւ խափանեցին զգնացս  
իմ և հասեալ խոցոտեցին զիս 'ի մահ:

Ի՞նչ ինտամ ցնծացեալ, զի այն վիրօք և որ յառա-  
ջագոյն խոցոտեալ իմ հոգիս մեղօք՝ առողջացեալ զօ-  
րացաւ:

Եւ այսպէս վճարեալ զամենայն կամաց ինդիր 'ի վե-  
րայ իմ՝ այնուհետեւ ուրախ լինեին որպէս 'ի կառա-  
րելում տօնի զուարձացեալք: Որոց պարտն էր լալ զիս  
իբրև զանցուցեալ՝ նատեալ շուրջ զինե 'ի սենեկի, և  
արտասուել իբրև զվիրաւոր և գեղ դնել. այլ զսցունց  
հասուցին զհակառակն՝ այպն առնելով պատեցին շուրջ  
զինե՝ 'ի սիրտս իւրեանց ինդալիցք. բացին 'ի վերայ իմ  
զբերանս իւրեանց և ասացին վմշ վմշ՝ տեսին աչք մեր:  
Եւ զի ոչ լոկ բանից ընդպայրախօսութիւն է զոր ասեմն,  
այլ ձշմարտապէս արդիւնաւոր փորձիւ յանդիման կացու-  
ցանեմ հետառնդ զբանս :

Օ երեւելի սեպուհ մի յականաւոր առհմէ առաքեցի  
առ գլխաւորդ հայոց <sup>սս</sup> քահանայութեան՝ առ հիւանդա-

<sup>20</sup> Ոչ յանձն առնումք համարձակապէս հասառել, եթէ յոր 'ի բա-

տեսդ հոգւց՝ ասեմ, «առ ՚ի բժշկովթիւն վիրաւորաց փութահաս <sup>Հ</sup>ազնել. խոցատեցայ ՚ի թշնամնոյն անթիւ նետիւց, կարեվէլ եւր մերձ ՚ի մահ. քեզ է պյուհետե հարկ դնել դեղ և բժշկել, կամ թէ մեռանել՝ տանել ՚ի շիրիմ և թաղել:» Եւ նորա պատասխանի արարեալ ասաց առ պատգամաբերն <sup>Հ</sup>։ « շնորհելով Վիրիստոսի ողջ լեր. և այրն ոչինչ թեթև եթէ ես, և ՚ի տեսանել իսկ չիշխեմ զքեզ առ երկիւղի՝ դու ասես, եթէ դամ բժշկեմ և կամ թաղեա . մե՛ դուցէ զգացեալ ուրուք զլուրբ հոգւցն, թէ վայ որ պահէ զագահութիւն ՚ի չար տան իւրում: »

Դարձեալ ասէին, « թէ դամ մի պիղծ ոք է և չարս գործ՝ ՚ աղարայ վանք անդէն և սիրէ զնոսա:» Եւ զայն պիսի բանից զասացողաց զգործս ես ահա լրեմ, զի ոչինչ է ինձ հարկ ասել. բայց օր ահագին և անաշառ Վիրիստոսի չլու, այլ անշեջ բացոյն մատնէ : Եւ անուանէին բարեկամն ինձ եղբարսդ սրբոյ զգին գրուանին զքո Տեառ ուն եղբօրորդւով : Եւ ունին երեքեանքդ զամենայն մնադեան և խրատու մասն և զհրահանգ հոգեպէս և մարմը նապէս՝ և զծանօթութիւն ուղղափառ հաւատոյ օրհն աելց ՚ի մօրէն քումնէ և ՚ի քէն ՚ի Տեառնէ : Եւ են արք

հանայապեակց մերոց ահարկէ Ղաղար. արդեօք ՚ի Յազէտն Ման գակունին (եկաց ՚ի 480 ամ), ՚ի Ամուռէլ (492), ՚ի Մուռէլ (502), եթէ ՚ի Սահակ (510) :

<sup>21</sup> Յօրինակսն մեր եղեալ տեսանի, և առ ՚ի բժշկութիւն վիրաւորաց փութահաս յօդնել :

<sup>22</sup> Յօրինակսն մեր տեսանեմք, « Եւ նա պատասխանի արարեալ ասաց և պատգամաբերն :

ոչ թերակատարք ինչ հասակաւ և կամ աշխազք , այլ  
յամենայն մառաւորութիւնս և յիրս արիութեան լիք և  
կառարեալք : Ի՞նդ նոսին և զլաբեղմնից տէր <sup>25</sup> , որ և  
նա 'ի քո Տեառն սիրուն և յամենընկալ բարերարու-  
թենէդ ունի զամենայն յարգանաց իւրաց և լինելոյ 'ի  
միջի զպառձնու և առ 'ի տեանէ , և են 'ի Քրիստոսի  
շնորհէն ամենեցեան ողջ և 'ի միջի՝ հարցին ըստ մարմարոց  
զհայրութեան իմոյ խրասս և զըստ հոգւոյ զվարդապե-  
տութեան իմոյ զբան . և զոր ինչ լրւեալ է քո յինէն՝  
չունելով պարտաւորութիւնն յօգիս իւրեանց , ասացեն  
անուրուտ :

Ի՞այց սիրէին երեքեան եղբարքն զվանսն Արքոյ Լա-  
թողիկէի պտղովք և ամենայն պիտոյիւք , որոց իւրա-  
քանչիւր ուրուք տուրն յայտնի էր՝ և գրով մնաց 'ի տե-  
ղութն . որք արդարէ քո Տեառն կամացդ դոքա երևեցան  
կամնկատարք : Ու ամն զի յօրէ յորմէ՛չետէ՝ դու Տէր ,  
ըստ քո անարդամեծար իննամոցդ յանձնեցեր զիս քո ըն-  
տանեաց , դոքա երևեցան յիս հրամանակատարք բանի-  
քում՝ ուրոյն ըստ կամի զպաղաբերութիւն տեղւոյն հա-  
տուցանելով :

Ու տրտում եմ անմիշիթար մինչև 'ի մահ : Որ նման  
գայլոց յարձակեցան յարասս իմ և գիշատեցին յանինայ՝  
տեսեալ զիս , եթէ մերժեցայ յաջաց քոց : Եւ արդ իմավ  
ընչիւք շրջին պձնեալք՝ ծաղր առնելով զիս . այլ որ  
ինչ 'ի տեղւոյն մնաց իմ , ուրախ եմ և ցնծամ , զ'ի սուրբ  
և 'ի հոգւոր տեղւոյն մնաց :

<sup>25</sup> Տէրն Աբեղենից Գաղրիկ պէտի լինել , զոր յիշէ Ղազար 'ի Պատ-  
մութեան իւրում . տես եր . 98 :

Դարձեալ պիլ շոգմոդ բանիւք բայրացուցանել զքեզ՝  
Տէր, ընդ իս փութային . թէ մանուկ մի հոգաբարձ տե-  
ղւոյն չկարէ առնել . Աւ ինձ հրեշտակ ոք ոչ մարմա-  
ցաւ, որ թերեւ ըստ հոգեղին բնութեանն տեսեալ  
զա՞ի ծածռակ ձգեալ զորոգայթ թշնամեացն՝ մարթէր  
դպոշանալ և յանձն առնայր լինել ինձ երկրորդ մարդ,  
զոր և առնէի :

Անդէն և անդ հասեալ մօտ անկանէին 'ի դաւանանու-  
թեամբ նենդիչքն , և արբուժեալ հրապարս պղտորս՝  
ասէին . « Ով անմիտ մարդիկ , ընդէր վաստակիք յանո-  
գուստ . հիմ լցոք ՚ի զուր ՚ի խորշակահար տեղւոքք և  
խօլութեամբ անձնամնաք լինիք . զի են 'ի Ամֆիկոնէից  
տանէ աւագ ծառայք ուննք և այլ քահանայն Լուսք որ  
է 'ի տանն , որոց ընդ մեզ բանք են երդմանմի , թէ երբ  
և է Դազարմայ իսկ շրամ հանդչել այրէր , թող թէ  
նորմ ումեք : Աւ այսպիսի բանիւք թուլացեալ լսողքն  
այսուհետեւ 'ի շարակս իւրեանց առաւել քան 'ի տեղիք՝  
փութային համբերել : Այսկայն ես նաևն մեղուի բերելով  
յամենայն կողմանց՝ բաւական լինէի և ' ծախտպացն և  
մշերից տեղւոյն :

Իսպայց դու Տէր՝ այլ յերկարայուշ ես և անմեռաց՝  
մննաւանդ . թէ ըստ 'ի քեզ հոգասիրութեանդ . քանդի  
յուրավ նորա արբանեկեալ էր զպէտս տեղւոյդ , հարցցէ  
թէ կայ ուրիք և տռասցի : Լոյլ կարգեալքն ինձ ըստ  
տարւոյ 'ի տեառն 'լեռնեհէ և աղրատայ 'ի պէտս դար-  
մնայ և հանդերձոյ և ձեռյ՝ յայտնի է . նոյնպէս և 'ի քո  
Տեառն յեղբօրորդեացդ , և այն իսկ շատ լինէր ինձ և  
բաւական . այլ երբէք և յաւելորդացն 'ի պէտս տեղւոյդ

Ծախեր յիմնցն : Ի՞սոյց բերեալքն իմ յլ՛ղուանից և 'ի Ալբաց և 'ի Աիւնեաց և յլ՛պշարունեաց և որ 'ի դոցունց խոկ 'ի քո Տեառն եղբօրորդեացդ՝ ամենայն խրաքան չիւր ուրուք ուուրին որոշողութեամբ մնաց 'ի տեղւոջն գրով . և զիս հանին մերկ և թշնամնաք յամենայն արաւ ըելոց խմաց, զոր 'ի մանկութենէ արարեալ էի : Ո՞ի անգամ և զհոռում գրեանդ ոչ ետուն զկնի իմ, որք կան այդը ընկեցեալ 'ի կերակուր ցեցոյ . բայց արդեք կարդացեալ լուսաւորիցն 'ի դոցանէ բնակեալքդ 'ի տեղւոջդ՝ և կամ զայլս լուսաւորիցն :

Եւ դու Տէր՝ զայս և մի ինչ ոչ գիտացեր, բայց գիտել արժան էր . քանզի լուայ, եթէ առէին զկնի իմ, « Եթէ չգոյր ինչ<sup>24</sup> 'ի տեղւոջն : » Ո՞ի ամենայն կահիւ կազմածով Եթէ տակաւ մե երեւէի նուազեալ քան զայնոսիկ, որք յերկերիւր ամէ շինեալ վանորայքն՝ չհամարէի զանձնա արժանի կալոյ : Ո՞ի թէպէտե. միանգամ և երկիցա ջարդեցաւ բոլոր կահն յանհաստատութենէ շինուածոյն . այլ զվերջինսն թէ գիտացեալ էր Տեառնդ և պահանջեալ յինէն համարս դէմ յանդիմն զերևելիս գոլ առաջի քո ընտրութեան՝ գովութեան և կամ պարստանաց էի արժանի : Ի՞սոյց ես ընդ օճտելոյն ևեթ այսր անդր և ուրպյն զիմ պէտս և զկարօտութիւն հագալով , այլ և զբանս իմ յոյժ ախորժիւք և պատուականութեամբ ընդունէին՝ որպէս և զառողջ վարդապետի , և պատուեին որպէս և զհայր՝ և մանաւանդ առաւել տէր համազասպ<sup>25</sup> , որում տացէ Տէր ողորմութիւն որպէս և տանն

<sup>24</sup> Յօրինակսն « Եթէ չգոյր ինձ 'ի տեղւոջն : »

<sup>25</sup> Տէր Համազասպ՝ եղբայր Վահանայ Մամիկոնենի :

Անիսիկորայ բալեխօսութեամբ ասողի զբանդ ։ զի բա-  
զում անգամ հանգոյց զիս և 'ի հալածման կերակրիչ  
իմ եղեւ :

Դակ ոմանց ։ « 'ի տանդ Տեառն ես իբրև անօթ էի  
յաւելորդ , քանզի յաղագս որոյ արտեստի՝ դու Տէր ,  
զիս սպասաւորեալ մեծարէիր : » Ի՞սկամ ինչ դոքա չէին  
տենչօղք . արծաթ և ոսկի , զոր թէ իմ 'ի շատ ուժեքէ  
գտեալ էր , որում թէ ոք 'ի խնդիր էր՝ զայն 'ի պէտս  
տեղւոյդ ծախէի : Խյոհակերութիւն ուսեալ խակ չէի ,  
եթէ ձկան աղիս ըստ որում ճաշակելեացն մարթէի յօ-  
րինել և կամ զհաւուց փորոտիս , որովք թերեւս կարէի  
ուժեք հաճոյ լինել :

Տայց ես և այլ նոր իմն բանա ասեմ Տեառնդ , զոր  
եթէ թուիցի արդարախնդիր մասցդ՝ նախ քամենայն  
աղաչեմ՝ զՏէրդ քննել զայդ , յորոյ ճշգրտիւ հասեալ 'ի  
վերայ՝ կամ զարմասջիր և կամ խոտարեալ իբրև զոչար-  
դար՝ անգունեսջիք : « Քանզի յօրէ՝ յորմէհետէ տարար  
դու Տէր զիս 'ի տեղիդ , մինչև յօր հալածման իմոյ՝ 'ի  
մաից տեղւոյդ և կամ յերեխայրեաց մինչև ցորամ մի  
յանձն իմ ոչ է յարեալ , և յիրս իմոց պիտոյից ուժեք  
ինչ ոչ էր տուեալ . և գիտեն զայս բնակեալքն ընդ իս:  
Լայլ առաւելագոյն այր մի լ'կիթ անուն , որ եկեալ 'ի  
տեղիդ 'ի Գարդմանայ վանաց 'ի նմին աւուր , յորում  
հիմն արկաւ տեղւոյդ և մինչև ցգնալն իմ 'ի տեղւոյդ  
էր , և արդ լուայ թէ առ լ'նդլոյ է . նա առաւել գիտէ՝  
և զիս ընդ քեզ թաղիցէ , որ աներկիւլութիւն քաջ  
հովուի է :

Այս հոգողութիւն արդար ուստացչի. ուր քրիստոնանը՝  
մանաւթիւն արդար հայրապետի: Արարածոց արարիչն<sup>26</sup>  
յաղագս մեղաւորաց գիւտի մարդ եղկ. բաղում՝ թշնաւ  
մանաց համբերեաց՝ կոփանաց և թուք յերես աւնլոյ և  
. փշեղէն պսակի հանդերձ այլովք ևս մեծամեծօքն. դա<sup>27</sup>  
և ջուր անզամ սրսկել ընդ երեսս թալիացելոյ վիրաւոր՝  
ոչ իշխեաց 'ի մարդկան երկիրդէ: Առեալ լիաբուռն  
զդահեկանս 'ի Յամարտացի գլածէն՝ զգինս դար-  
մանաց հիւանդաց 'ի սապատ համբարէ և զհիւանդս հա-  
նեալ 'ի պանդոկւյն՝ ընկենու արտաքս բազում անփու-  
թութեամի: Ծիրկիչն Վիրիստաս բարձր կոչմանմի զամե-  
նայն որ ինդրէ զմեղաւորս. եկայք առ իս ամենայն աշ-  
խատեալք և վաստակեալք և որք ունիք զրեուին ծանունա-  
և ես հանգուցանեմ զձեղ. և Պիղոս զանյարական դար-  
կումն զանյայո դիպեցման յաշխարհիս չենս գլորելոցն  
զգուշացուցանէ՝ գլուխով առ Պաղասացին. եղբարք՝  
ասէ, եթէ յանկարծ ըմբունեացի ոք 'ի ձենք յինչ և իցէ  
յանցանս, դուք որ հոգեւորքդ եք, հրատատեցեք զայն  
պիսին հոգւով հեղութեամն. զգոյշ լինիցիք անձանց, զի  
մի՛ և դուք փորձիցիք. զմիմանց բեռն բարձեք, և այն  
պէս՝ կառարեցէք զօրէնան Վիրիստոսի: Խափ դա<sup>28</sup> զնու-  
րին հակառակին աղաղակէ, թէ « Յո՞ գաս, չիամիմ» չիշ-  
խեմ տեսանեմ: » Արդեօք տարո՞ զիս 'ի սենեակ միամ-  
բամ և երկիցս և խօսեցա՞ լիսդ իս՝ որպէս հրամայէ:

<sup>26</sup> Յօրինակն մեր « արարածոց արարչին յարադս մեղաւորաց գիւտի  
մարդ եղկ: »

<sup>27</sup> 'Ի քահանայապետն անսարկէ, գուցէ 'ի Այնդակումին:

<sup>28</sup> 'Ի նոյն իսկ 'ի կաթողիկոսն անսարկէ:

Փրկիչն , միայն ընդ միայն , և կամ միով և կամ երկու ընկերօք . և գտեալ անհաւան՝ համարեալ իբրև զմաւոր և զմաքստոր հաշածէր :

«Եկշեալ՝ տեէ , ուրում երբեմ առ ՚լագի զանուն իմ առաջի ունաց պարեգօտու որաց՝ առաց տրտմնդին հառաջմամիք , «Եթէ ոչ եղև իրաւոցի հեռանալ առն յաշխարհէս , քանզի դարդ եր եկեղեցւոյ : » Եւ ոչ այլ ինչ կարացեալ ասել լսողացն՝ զայտ և եթ ետուն պատասխանի , «Եթէ յաղագս հալածման նորա մեք չեմք ինչ պարտաւորք . բայց վասն գիտութեանդ , որ ասէքք՝ արագարե յառաջնումն քաջիամերս առէր և զօրաւորս . բայց ապա յարդի ժամն բնաւ վատ ասէր : » Եւ զայտ ոչ կարոցին գիտել , թէ ՚ի յանդիմանութիւն և յանձն անձանց իւրեանց խօսէին զայնպիսի բանս :

՚լոդ աղջ՝ առասցեն , յաղագս ո՞յլ շնորհեալ պարգևեի վարդապետութեան բանս . — ասողին . ոչ ապաքեն վասն ումինդրացն ախորժութու լրութեան և ինդրուածոյ : ՚լայեցարուք ընդ ժողովուրդն զունաց՝ յորժամ քարոզն լուեալ աղաղակիէ , և որ կամին առել՝ ՚ի կարգեալ տեղիսն մատչի . ամենեցունց զարթուցեալ զսիրաս առ ՚լատուած վերացուցանեն . տարածեալ ձեռօք խաչանմոնք լինին . միաձայն ինդրուածով և արտասուալից գոյմամիք ըդ Փրկիչն թախանձեցուցանեն . «Ծուր՝ տան , բան . առաքեալ շնորհ . դու իսկ ինքն դոփաւ որպէս սրբովն Վրողութիւն խօսեալ ընդ մեզ . նման ծանտ զհաշտութիւն քո ընդ ծաւայս քո : ՚լի՛ նմանեսցէ դա յաղագս մերոց մեղաց՝

<sup>29</sup> Յօրինակոն եդեալ կայ «յարդի ժամ» , « զսր մեք «յարդի ժամ» » սրբագրեցաք :

սամբրջ ամբոց այլ անձնեւահոս բղխմամբ յորդեսցէ յան գատանա հոգւոց մերօց, որովք ծաղկեալք՝ պառղք արժանիս հաճութեան կամաց քոց բերեալ մատուցուք<sup>30</sup>։»

Այ արդ՝ ոյր ուրուք՝ 'ի տգիտաց՝ թող թէ սակաւ մի և 'ի հետեւըց բանի, ոչ զարթնուցուն միտք, չվտիցի խոհարան, չվերաբերիցէ 'ի դանձուն Այուրբ հոգւոյն զնոր և զհինս՝ մանաւանդ որ ըստ խոնարհութեան ոք՝ և «Հպարտական գիտութեամբ մատչիցի յասելն 'ի լսողացն յաղօթու և ոչ յամահնն պամծայցէ գիտութիւն։ Օ 'ի եթէ ընտիր Աստուծոյ անօթն՝ Պօղոս, առ իւր աշակերտեալսն յիշվեսոս գրեր՝ աղաւելով։ «ԱՌԾԱ արարեք, ասէ, և վասն իմ, զի ինձ տացի բան 'ի բանալ բերանոյ իմոյ։» և արդ եթէ որ հազարապետն եր խորհրդոցն Աստուծոյ՝ աղօթից կարօտեր և աղաւեր, որչափ ևս առաւել այժմու մարդիկս՝ զգածեալ բազում տկարութեամբ։

Դակ հայոց աբեղենքս առ դառնաշունչ նախանձու, որ միացեալ է 'ի սիրտս նոցա՝ զնոցունց հակառակսն երկնեն. — և արդարե ըստ ասացածի մարդարեին՝ յշանան զցաւս և ծնանեն զանօրէնութիւն—աղօթս իսկ չառնեն 'ի վերայ ասողին. այլ և եթէ յանկարծ չնորհի բան 'ի Ամարդասիրէն՝ հեղձնում 'ի նախանձուէ։ Եթէ զք տեսանեն 'ի ժողովրդենէն եթէ գովէ՝ ծպղը առմելով ամնչեցուցանեն. «արդ՝ լուել ինչ, ասեն, չգիտէ և ընդ վայր աղաղակէ և քրքուի։» Դակ Քունաց ժողովուրդմն

<sup>30</sup> Որպէս 'ի հասուածիս' նյոյն և 'ի յետագոյ բանս, գեղեցիկս նկարոքէ Ղազար զսովորութիւնս քարոզացն Յունոց 'ի հինգերորդ դարու, ընդ նմին և նորադարձ քրիստոնէից ժամանակին։

և տղայքն անգամ՝ ՚ի վերայ ուսոց ծնողացն՝ շարժեալ զմեռներն ՚ի գովութիւն այլոցն, ձայնս անյօդակապս յար ձակեալ յայթուեն<sup>31</sup>։ Եւ դոքա նստին գլխարկեալք, պատատեալ երեսօք՝ որպէս առ հոտեալ դիական, պապան ծեալք որպէս համրդ դե։ Եւ եթէ գթացեալ Արդասիրին՝ կամբցի տալ բան խրասու ՚ի ժողովրդոցն փրկութիւն՝ հայեցեալ ՚ի դաւն խորհրդոցն նոցա որոճմնւնա, յինքն ամփոփեալ արգելու զշնորհն, անդիմակայ արդարե ըստ գրելումն յօրհնութիւնս օրհնութեանց՝ Երկոքին սոքա — սէր և նախանձ — թուիչք նորա թուիչք բոցոյ հրոյ. յորոց իւրաքանչիւրոք յայսց ՚ի բարի վարողացն արքայութիւն առթէ, և ՚ի շարիս աձնեցուցչացն զդժոխս ժառանգեցուցանէ :

Եւ արդ՝ իցե՞ղք ՚ի ժամանակս<sup>32</sup> նմանօղ մարգարէին Վրեմիայի, որ ասէր ողբալով « Անչ ՚ի դոսս դեռես լուեալ երնախանձն՝ յասօղս զօրացեալ եր շնորհն. իսկ յորժամտեսին զբազմութիւն ժողովրդոցն յօժարեալս ՚ի լսել, յորդորեալս ՚ի գովութիւնս՝ պատմելով միմեանց զշնորհին յորդութիւնս<sup>33</sup>, յարգելով և անմնուաց զարմա-

Եւ ասեն. « ՚ի նախնումն գիտնաբար խօսէր ՚ի ազար և այժմ անգիտաբար : » Անչ ՚ի դոսս դեռես լուեալ երնախանձն՝ յասօղս զօրացեալ եր շնորհն. իսկ յորժամտեսին զբազմութիւն ժողովրդոցն յօժարեալս ՚ի լսել, յորդորեալս ՚ի գովութիւնս՝ պատմելով միմեանց զշնորհին յորդութիւնս<sup>33</sup>, յարգելով և անմնուաց զարմա-

<sup>31</sup> Այսպէս եգեալ տեսանի յօրինակս մեր, զոր՝ գուցէ, ընթեռնուլ պարսէ և ձայնս անյօդակապս արձակեալ կոյթուեն : »

<sup>32</sup> Այս ինքն՝ « ՚ի ժամանակս յայս մեր : »

<sup>33</sup> Յօրինակս մեր. « զշնորհին յորդորմունս, » որ նշանակէ և ոչնչ :

նույն զրուտառոր և գրանդայթ բանին բղեսումն 'ի հրս-  
պարսկա և 'ի փողոց՝ յայս և եթք հռչակելով առ միմանա  
խայտացեալք<sup>34</sup> 'ի կոր կործանեցան. և այսուհետեւ սկսան  
յշմանալ զրիսակալութիւնն և ծնամնեղ զնախանձ : Խակ  
յոդժամ 'ի դուսա այնպիսի առաւելլաւ չարակամնաթիւն՝  
լւեալ արգելու բան, և ոչ թէ յասողեն՝ քառ լիցի —  
քանզի անզեղջ է չնորհն և անպական են պարզեցն — այլ  
'ի դոցանէ, զի մի լուիցեն զրան փրկութեան խրեանց .  
առ որս կատարի բան Հոգացյն, որ ասէ, թէ առց ձեզ  
սով՝ լսել զպատգամն Տեառն :

Խահեցուցեալ զմնածութիւնսն 'ի բազում յաձմնուս՝  
և զայս ևս յօդեալ յայլ չարախորհութիւնսն՝ ասէին .  
«Ո՞յդ գիր ոչ կարդայ, և զընթերցուածն այնպէս ասէ  
անսայթաք՝ որպէս թէ գրոցն : » Խւ յայս ոչ հայեցան  
գիտել, թէ որք քաջ գիտեն՝ զսաղմուն 'ի աւթի պաշ-  
տել միոյն պիտոյ է 'ի ժամուն անսխալ, և ոչ միշտ զգիրսն  
'ի ձեռին ունելով՝ խօսել զայլ այլս իրբե զբանդադու-  
շեալս : Խակ մեր երանելի վարդապետքն զամենայն զլյա-  
կարանս եկեղեցւոյ երիցս և չորիցս ուսուցեալ մեզ 'ի  
սկզբանէ մինչև 'ի կատարած գրոցն՝ համարս պահանջե-  
ին 'ի մէնք զնոյն, և իրբե զ՞ի աւթի տաղմուն պաշտել  
մեղ հարկաւորեին : Խակ այժմ յոլովք 'ի լիրբ մախողաց  
և զանուանս անգամ և կամ զքանօնութիւնա կանոնել ե-  
կեղեցական գրենոյ հազիւ կարեն գիտել՝ և գրգռու-  
թեամբ նախանձարկու դիւին նստեալք առ միմեանս՝ լու  
'ի լու այլոցն զինչպիտս խօսին :

<sup>34</sup> Այսպէս յօրինական մեր . գուցէ պարտ իցէ ընթեռնուլ, « զայս  
և եթ հռչակելով առ միմանս խայտառելք 'ի կոր կործանեցան : »

Այս արդ՝ զի՞նչ ևս առեմ, զի չե բաւական ժամանակս  
համարելոյ զանթիւ յիս 'ի նետաձգութեան թշնամոյն  
զվերս, զոր աւուր աւուր և ժամու ժամու ընկալեալ  
վասնգիւ՝ առնեի առենայնի 'ի հարկէ: Ի՞սանզի և կծկեալ  
որպէս 'ի տատիկ և պինդ կապով՝ քաղցր և ամենահեշտ  
քո հնապան ախորժակ սիրովս, զորոյ եթէ գամ ճաշա,  
կել ուրաք առցէ զհամ անուշութեան՝ կամի զմեռաւ  
նել քան թէ յայսմանէ վրիպել:

Բայց այժմ եկեալ յաւարտումն բանիս՝ 'ի դեպ և 'ի  
պատշաճ համարիմ յիշել զզարմանալոյ և զերիցս երա-  
նելոյ աւազակին զբան, զոր 'ի խաչին սաստելով առեր-  
ցեղիւլի յիւր ընկերն, թէ մեք ըստ արժանի զոր գոր-  
ծեցաքն՝ ընդունիցինք զհատուցումն, և 'ի Փրկիչն հա-  
յեցուցանելով, թէ իսկ սա ընդէլ:

Եթ՛ ես ահա ըստ արժանի որոց գործեցին՝ ընկալայ  
զպատուհան, և խոստովանիմ առաջի հրեշտակաց և  
մարդկան. իսկ այլ առաքելանան մարդիկն ընդէլը այս-  
պիսումն, և ևս առաւել քան զայն դիպեալք 'ի յաշխար-  
հիս 'ի յայսմ՝ խառագոյն վշտիւ վախճանեցան:

Երամելի փիլիսոփոսն Առվեհս<sup>38</sup>, ոք արդարեւ մինչ-  
դեռ եր 'ի մարմնի՝ ցանկ երկնային զօրացն եր քաղաքա-  
կից. ոչ ապաքէն 'ի տեղւոջէ 'ի տեղի արեղեանդ հայոց

<sup>38</sup> ԶԵ ովկիսէ խորենացւոյ են խոգք: Արժանի ուշադրութեան է,  
զի Ղազար տառանօր զծերունայն խորենոյ նառելով՝ ինչունիւն կաչէ  
զնա, որով և ակնարկել առ մեզ 'ի հայրն: Պատմութեան ազգիս  
երբեւ յիմնաստուէր ականաւոր, և ոչ իբրև 'ի զոդնախն կամ 'ի ուշր-  
իուն լոկ' սրբիս սրվոր են կոչել զնա ամենայն մասնագիրք մեր: 'ի

հալածական արարին : Ո՞չ զլուստուրիչն և զագիտահայ  
ըստ դժբեանն նորա առ անգիտութեան « մասթաղիկես »<sup>36</sup> »  
կոչեին . և այլ բազում ինչ իրաք թշնամոնեալ՝ յիշոյ  
ապա յաղագս այլոց ամձիւոյ զիսաբէական դեպիտեպուտ  
թիւնա նման դեղոց մահու արբուցեալ սրբոյն՝ հեղձու  
ցին . որոց 'ի ժամ վախճանին զինչպիսի ահաւոր նզովս  
գրով 'ի վերայ գլխաւորաց քահանայութեանդ ատացեալ  
է՝ ձեզէն իսկ գիտէք տեղեկացեալք <sup>37</sup> ... զտեառնէ . զնա  
կացոյց 'ի վերայ անչափ անհանգիստ աշխատութեանց և  
վաստակոյն զցայդ և զցերեկ 'ի լուսաւորութիւն աշխար  
հիս Հայոց : Օ սակերսն 'ի գերեզմաննէն համել տային  
և 'ի գետ արկանել . զհրեշտականման այլն զտէր նոյն՝

յետագայ սակաւամասն բանից Պալարայ աներեւ անօանի, եթէ բաց  
'ի նշխարաց գործոց խորենացւոյ՝ առ մեզ հառելց, արտեալ եր  
սորտ նաև գիմաստասիրտկան գրուտծո, յորոց և ոչ մեջ ինչ հատուտն  
չէ ժամանեալ առ մեզ . քանզի այժմ ոչ երեխն 'ի մեջի « լուսուռ-  
րիչ և տգիտահալած գրեանն նորա : »

<sup>36</sup> « Փաթաղիկես » բառու այս չէ Հայոց : Ժմասի ինձ, եթէ հելլենացի  
բառ համարելի է, կամ 'ժէ լու ևս առել՝ հելլենացուցեալ լսու-  
նականն fatalicus, որոյ ծագումն յետին ժամանակաց՝ այն է, ոկզբան  
ՄԵլին գարուց՝ ընծայելի է : Այս Աղեքունգրացի իմաստառերս և  
առ նախնի Հարս եկեղեցայ 'ի տառալուս փոխադարձեալ՝ 'ի հեր  
արկեալ լիներ այդ բառ . իբրև նշանակիչ և Խակասագրականի, ֆատա-  
լիստիկուն : Զիմաստասիրտկան գործոց խորենացւոյ « Փաթա-  
ղիկես » կոչեին պարեգատաւորք ժամանակին՝ թերևս ցուցանել կո-  
մելով այդու, եթէ վարդապետութիւնն նորա 'ի գիլիսովոյական 'ի  
գրուտծո նորա առաւել արտաքին իմաստնոց էր և հեթանոսական,  
յոյր սակս և վնասարեր, քան թէ քրիստոնէական և օգտարեր :  
Այս այս կարծիք եեթ է, զոր առաջարկեմք :

<sup>37</sup> Որպէս յօրինակն մեր՝ նոյն և 'ի բուն գրչագիրն երկու թերթք  
պակասին ասան :

անհանգիստ հալածանք վախճանեցուցին, ողբ և այժմ՝  
դեռ ևս<sup>38</sup> անյազութեամբ գինով ընդ մռածլոյն կագին<sup>39</sup>:

Ի՞նարաս և յամենեցունց յարգելի յոյսն՝ տէր իյոսրու  
վիկ, չե ևս հասեալ՝ ի ասհմանս մեր՝ Փնչղեռ գայր՝ ի  
ձանապարհի և լուսն, որպէս՝ ի վերայ թշնամոյ ընդ-  
դէմ զինեցան՝ ասելով. «ահա ուր գայ միւս թարգմանն»:  
Եւ օրհնելոյն՝ ի հեռաստանէ լուեալ զդանչիւն մահա-  
ձայն աղեղանցն՝ աղօթեաց առ Շնարձրեան և վաղվարակի  
ընկալաւ զինդիրն, որում և տենչալի նշխարացն այլք՝  
և ոչ մեք, արժանի եղեն ընդունակութեան:

Ի՞ւլ՝ ի դէպ համարիմ ընդ նոսին յիշել և զտէր  
Ի՞քրահամ զեպիսկոպոս, որում ըստ ձաթի<sup>40</sup> խորհրդոյն  
և շհանգուցանէր՝ ի ծերութմիւնա, և կարող լինէի առ  
նմա գոնեայ սուղ ինչ ժամանակ մնալ, թէպէտ և ոչ  
թերակատար գոլով սուրբ և ստոր հաւատ, զոր ուտեալ  
՝ ի տղայութեանն յերանելոյ Ի՞լանայ՝ կեամ նովիմի՝ ի  
նմին անփոփոխութեամբ մինչև՝ ի վախճան կենցաղոյս  
իմիյ: Ի՞ւլ՝ յաղագս իմաստաւոր բանի ըստ նորա տեաւն  
մեծ հրահանգին, շահեալ՝ ի նմանէն՝ հանգըն մեծի  
գանձու ամփոփելոյ հաշուեի զպարարումն զայն: Քորոյ  
վերայ տեսեալ պարեգուստուրաց՝ զայրագնեալ իմն զօրհ-  
նելոյ տիկնոջ Ի՞ւագի զմիտոն ոչ ծանուցին առժամայն.  
նա աղաչելով զերանելի մնայրն՝ հոգացեալ իբրև զեղ-

<sup>38</sup> Յօրին. « գեռ. և : »

<sup>39</sup> Այս ամենայն արդարանց բանիւք նորին իսկ խորենացայ, զոր  
տեսանել կարէ ընթերցողն՝ ի Յառաջաբանի մերում:

<sup>40</sup> Աղջասեալ երեի որպէս բառս այս, նոյն և «զշոյն յօդուած»  
յետագայ:

բարս 'ի վերայ Եղբօր, այլ առաւելս զայրացուցեալ՝  
գրգռելով զկամացն իւրեանց նովաւկատարեցին զհանոյս:

Խւ այսք այսպէս թշնամնեալք և հայհոյանք հա-  
լածեալք՝ ոչ յերեկոյս ինչ ժամանակաց զրուցատրու-  
թեամբք յումբքէ համբաւուց ծանուցաւ մեզ • այլ առ  
մեզ խակ և 'ի մերում ժամանակի Եղեալ տեսաք զայս  
ամենայն :

Խակ զյառաջագոյն գրելոցս սուրբ արանցն, զորս 'ի  
պատմութեանն նահատակին Գրիգորի դրոշմեալ յիշա-  
տակէ<sup>41</sup> : Օ ինչ ևս ասացից զարդար և զարժանաւոր  
բարեպաշտ կաթուղիկոսէն՝ զըրբոյն՝ Եղբահակ և զկրօ-  
նաւոր առաքինւոյն և զմեծ լուսաւորչէն Հայոց՝ զտէր  
Այսակայ, և զայլոց բազմաց, որոց ոչ բացեալ 'ի բա-  
րերան զբերանս իւրեանց՝ վախճանեցան :

Քաղաքս որոյ Երկնչիմ զարհուրեալ, Փ գուցէ և  
'ի դոսա յարիցեն Լուետարանին սպառնալիքն, որ ասէ .  
Լոհաւաիկ ևս առաքեմ առ ձեզ մարդարէս և իմաս-  
տունս և դպիրս, և 'ի նոցանէ սպանանիցէք և խաչիցէք  
և տանջիցէք 'ի ժողովուրդս ձեր և հալածիցէք 'ի քա-  
ղաքէ 'ի քաղաք • որպէս զի Եկեսցէ 'ի վերայ ձեր ամե-  
նայն արիւն արդար հեղեալ յերկիր՝ յարենէն Լոքէլի  
արդարոյ մինչեւ ցարիւնն Օ աքարիայ՝ որդւոյ Իարեքայ,  
զոր սպանէք 'ի մէջ տաճարին և սեղանոյն • այո՛ ասեմ  
ձեզ, զի ինդրեցից յազգեղ յայդմանէ<sup>42</sup> : Լոյլ մշիթաւ-

<sup>41</sup> Անհասկանալի է և այս տեղի :

<sup>42</sup> Զայս բան 'ի մէջ բերէ և խորենացի յԵրկրորդ գիրս Պատմու-  
թեան իւրոյ, գլ. զբ. ԱԱրդելում ասել զբրիստոսին՝ զատն զվեհժո-  
յարենէն ԱԱրելի արդարոյ մինչեւ ցարիւնն Զաքարիայ, որ կա՛ ի  
մէջ տաճարին և սեղանոյն : »

թիցիմք՝ ի տքիտաց՝ առ ժողովուրդն միայն Նըրեից կարծեցեալ զբանիդ ասացումն : Այոկասցի այնպիսին ուշադրելով, յարենէն ասաց Հարելի արդարոյ, որպէս զի հայեցեալ՝ ի ժամանակ սպանման նորա՝ ծանիցէ երկիւղիւ, թէ առ ամենեսեան է<sup>43</sup> բանդ, որ նոյնպիսի գործոց լինին նմանողք է Համարձակիմ ասել՝ ի սոյնս յանդքնութեամբ և զայս ես, եթէ ոչ իցեն ստոյդ կարծեցեալքս յինէն, դու Տէր քաղցրութեամբ զանց արարեալ՝ ներեսջիր ինձ որպէս տկարամոնի : Օ ի քոյում իսկ ամենասքանչ անձինգ, յորմանէ ամենայն մարդ՝ ի հայս յաւագ և՝ ի կրտսեր՝ հասեալ է մեծափէս օգտակարութիւն և գահ և փառք, իսկ ոմանց և՝ ի մահուամէ ՚ի կեանս՝ և ՚ի կորստենէ գտանիլ և՝ ՚ի մեջի լինել՝ դու Տէր, եղեալ ես պատճառ։ Լու արդ՝ տեսանելով զայդպիսի օր ըստ օրենքութիւն, որ պարզեալ առ նոսա բերեալ շքեղութիւնս և պարծանս, և թէ էր՝ կամէին գտանել հնարս, շատք էին, որ առ նախանձու չհատուցանէին զբարի փոխարէնա փոխանակ քա Տէառնդ քարույ, այլ զնոցուն հակառակն<sup>44</sup> : Խակ վերին արդարատես Լոկնարկումն չհայի

<sup>43</sup> Յօդինական մեր այսպիս . . . թէ առ ամենեսեան բանդ :

<sup>44</sup> ՚Ի Պատմութեան իրաւում (եր . 201 – 202) այսպէս նկարագրէ Ղազար զուրն ԱՄամիկոնէից Վահան . աԵկեալ ՚ի գրանէ և ԱՄաղիսըն Գագիչայ, և Ժողովեալք առ նու դառք ուրացողացն, որ թէ պէտք ուրախանցին զառժամանակեայ թաղծալից ուրախութիւնն կենցարոյս . ստկայն իբրև տեսանէին զԱՄամիկոննն Վահան այնպէս երևելի յաճմունք բարոյ համակեալ՝ ներկեալք խամբէին և ծնկեալք Շարշամէին : Խնդրէին ՚ի վերայ նորա հնարս պատճառանց, որով զնտ և զեղբարս նորա կորուսանէլ կտրուցեն : Տային

'ի չար կամացն ինդիրս , այլ իւր ինամակալութեանն յաջողութեամբ կատարէ հանապազ անփոփոխութեամբ 'ի բարիս , 'ի փառաւորութիւն անուան իւրոյ սրբոյ այժմ և միշտ և յախտեանս յաւիտենից . ամեն :

գիտել մեծամեծաց գրանն , այլ էր ինչ և «ը թագաւորին , [թէ «չ է հայր սա առանց ազատամբութեան կետ , 'ի Հայո : Ծիչցուցանելին Ալբեց և զնաբնեացն նորտ զմից մեր , [թէ ավ 'ի նոցանէ ոչ խուզեցոյ զԱլբեց աշխարհ և «չ արար մեծամեծ վասան և մահանն : Աւդ՝ երբ և է , տօնն , և ոտ զիսյն խուզվութիւնն յարուցանելոց է 'ի վերայ ձեր : Որոց լուսեալ զայս ամենայն բանն քառաթեան 'ի առեան բանսրիւաց՝ կատաձելին 'ի համբաւոյն . և հայելով յանձն յալոյակաւթիւն և յիմաստն՝ արտմիցն առ մերն : »

«Ցեսեալ պյուռէեաւ Վահանոյ զայնշտի յարուցմանն նախանձարացն 'ի վերայ նորա , [թէ «չ երբեք կասեալ լունն 'ի շար նախանձալից խօսից՝ չկարացեալ տանել հանապազօքեայ բանսրիւթեանն , երթեալ 'ի գուռն՝ ակարանայր 'ի հաւատան , և եկեալ 'ի Հայո : Սակայն և պյուռէս ինուուլ զմիրանս չարախօսացն «չ կարեր զի որ ոք բան ուղիղ 'ի հրապարակի տռաջիկ էշխանի չքիսեր խօսել՝ զնա տանայր . և որ ոք յորս կամ 'ի թիւրափն նետ չքիսեր զգել՝ զնա պարապարէր . անսաի՝ առէին , և ամենեցուն ունչ առնէ . և և որ ոք անմառաթեամբ զգործու արքունի չմարթէր գործել՝ 'ի նաբերէր զպատճառն : «Ղա՛ առէին , յառաջէ յամենայն 'ի գործու և շտայ ինչ ումեք գործել կամ օդաել . և վառնզի էր նա գործակից , որում անուն էր Վարի՝ անանան ըստ ազգի և անփորձ իրի , որդի առն Ալսորայ . բայց շատիսաւթեամբ և ընդվյարաբանաւթեամբ առաւելեալ նմաններ ազգի Ալսորոց . օրոյ չմարթացեալ գործել զգործ արքունի՝ երթեալ լինէր ամբաստան զՎահանոյ առաջի թագաւորին Պերտոզի , տօնլով՝ «[թէ ինձ 'ի գործ ոռիչհատին չետ ինձ մօտ երթեալ . և իւր ժողովեալ զամենացն առի աշխարհին՝ խորհի երթեալ առ կայսր և կամ յաշխարհն չքննոց , և առեալ զոսկին՝ կատի խնդրել գունդ և ազատամբել : »

**ՎՐԻՊԱԿ ՏՊԱՑՐԻԴ**

<b>ԼՆ</b>	<b>ՏՊ</b>	<b>ՊՊԵՄԼ է</b>	<b>ԸՆԹԵՐԵԵՑ</b>
26	18	ԱՐՔ ՆՈՅԻՆ	ԱՐՔ ՆՈՅԻՆ
28	8	ԳԵՂԵԼ	ԳԵՂԵԼ
,	12	ՉԵՂԵԼ	ՉԵՂԵԼ
43	1	ԱԲԵՐԵԱՆ	ԱԲԵՐԵԱՆ
45	2	ՎԼԵՐԻՆ	ՎԼԵՐԻՆ
51	10	ՀՎԵԼ	ՀՎԵԼ









**DUE DATE**

FEB 15 1999

201-6503

Printed  
in USA

1  
875151  
Digitized by Google

